ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՔՈՒԶԱՑԻՆ ԵԻ ՆՐԱ «ԹԱՔՆՎԱԾ ԱՍՏՎԱԾ» ԵՐԿԸ

Եվրոպական Վերածննդի շրջանի մտածողներից դժվար թե գտնվի մեկը, որն այսօր՝ 21-րդ դարում, այդքան արդիական լինի, որքան է Նիկողայոս Քուզացին (1401-1464) իր աստվածաբանական-փիլիսոփայական յուրահատուկ մտածելակերպով[1]:

Քուզացին ծնվել է 1401 թ. Գերմանիայի Քուեզ կամ Քուզա գյուղաքաղաքում՝ Մոզել գետի ափին՝ Տրիեր քաղաքից ոչ հեռու: Իբրև ուսումնատենչ երիտասարդ՝ Նիկողայոսն իր բարձրագույն կրթությունն ստանում է նախ Հայդելբերգի համալսարանում (1416թ.), ապա Պադուայի համալսարանում (1417-1424 թթ.), որտեղ ստանում է կանոնական իրավունքի եւ իրավաբանության դոկտորի աստիճան, վերջապես բարձրագույն կրթության նրա փնտրտուքն ավարտվում է Քյոլնում՝ 1426 թ.: Քուզացին այս ընթացքում հատկապես հետաքրքրվում է հին հունական փիլիսոփայությամբ եւ հայրաբանական երկերով, գտնում, ընդօրինակում եւ ընթերցում լավագույն ձեռագրերը: Բազելի (1432) եւ Ֆլորենցիայի (1436-1437) ժողովներին իր ակտիվ մասնակցությամբ, որտեղ որոշվում էր կաթոլիկ եկեղեցու կառավարման ձեւերի եւ նվիրապետության բարեկարգման հարցը, Քուզացին վերջնականապես գրավում է Հռոմի պապի ուշադրությունը՝ դառնալով նրա մտերիմ համախոհներից մեկը, եւ ի վերջո 1448-1449 թթ. նա ստանում է Կաթոլիկ եկեղեցու կարդինալի բարձրագույն պատիվն ու տիտղոսը: Քուզացին մահանում է Հռոմում 1464թ. օգոստոսի 11-ին[2]:

Քուզացին, բացի դիալեկտիկ ու նորպլատոնական իր դիրքորոշումից, կարեւոր տեղ է զբաղեցնում նաեւ Արեւելյան ուղղափառ աստվածաբանության եւ հայրաբանության խոր իմացությամբ եւ, որ ամենակարեւորն է, արեւմտյան դիալեկտիկ մտածելակերպի հետ համադրությամբ[3]: Քուզացու համար հատկապես կարեւոր էր առաջին անմիջական

1 Նիկողայոս Քուզացու գաղափարների արդիականությանն է նվիրված հետեւյալ ուսումնասիրությունը՝ **J. Hopkins**, "Nicholas of Cusa (1401-1464): First Modern Philosopher?", in **Midwest Studies in Philosophy**, vol. XXVI (2002): *Renaissance and Early Modern Philosophy*, էջ 13-29:

2 Քուզացու կյանքի եւ փիլիսոփայության մասին կարեւոր մենագրություններից մեկը շարունակում է մնալ Edmonnd Vansteenberghe-ի ուսումնասիրությունը՝ *Le Cardinal Nicolas de Cues, l'action, la pensée*, Paris, 1920: Քուզացու փիլիսոփայական-աստվածաբանական հայացքների մասին քիչ թե շատ ամբողջական մատենագիտական ցանկի համար տե՛ս **J. Hopkins**, *Supplementary Cusanus-Bibliography*, http://jasper-hopkins.info/cusabibliography.pdf:

3 Նոր կամ արդի փիլիսոփայության մեջ Նիկողայոս Քուզացու դերի ու նշանակության մասին տե՛ս **R. Falckenberg**, *Geschichte der neueren Philosophie von Nikolaus von Kues bis zur Gegenwart*, Leipzig, 1905, էջ

հանդիպումն Արեւելյան Բյուզանդական քրիստոնյա աշխարհի հետ 1437 եւ 1438 թվականներին, երբ նա հատուկ առաքելությամբ Կրետեում էր՝ Արեւելյան Ուղղափառ Բյուզանդական եւ Կաթոլիկ Լատին Եկեղեցիների միջեւ հավատի միությունն իրականացնելու նպատակով: Հենց այստեղ էլ ծնվում է Քուզացու հիմնարար գաղափարներից մեկը՝ «համադրութիւն հակադրութեանց» (oppositorum coincidentia), որը նա հետագայում ավելի զարգացրեց իր De Docta ignorantia (Գիտելիքի սահմանափակության մասին), De Visione Dei (Աստվածատեսության մասին), De Pace Fidei (Հավատի խաղաղության մասին) փիլիսոփայական-աստվածաբանական երկերում:

Նիկողայոս Քուզացու փիլիսոփայական հայացքների այժմեականությունն ու արդիականությունն են վկայում եվրոպական եւ ամերիկյան բազմաթիվ գիտական ընկերություններ, որոնց հիմնական առաքելությունն է Քուզացու փիլիսոփայական երկերի հրատարակությունը եւ ուսումնասիրությունը: Դրանցից հատկապես նշանավոր է 1960 թ. Տրիերում (Գերմանիա) ստեղծված «Քուզանյան ընկերությունը» (Cusanus-Gesselschaft), որը 1961-ից մինչեւ այսօր 32 հատորով հրատարակել է Նիկողայոս Քուզացու երկերի մեծ մասի լատիներեն քննական բնագիրը, ինչպես նաեւ Քուզացու եւ նրա փիլիսոփայության վերաբերյալ ուսումնասիրությունները[4]:

Նիկողայոս Քուզացին այս փոքրածավալ փիլիսոփայական-աստվածաբանական տրամախոսությունը գրել է 1445 թվականից մի փոքր առաջ՝ ներշնչվելով իր հիմնարար երկից՝ De Docta ignorantia, եւ փորձելով այստեղ արտահայտված գաղափարները գրական մատչելի ձեւով ամփոփել «Թաքնված Աստված» (De Deo abscondito) երկում: Վերջինս հայերեն թարգմանությամբ ներկայացվում է առաջին անգամ: Թարգմանությունը կատարել ենք լատիներեն բնագրից՝ օգտագործելով նաեւ եվրոպական հեղինակավոր գիտնականների եւ կենտրոնների իրականացրած թարգմանություններն ու հրատարակությունները[5]: Երկում առկա որոշ լատիներեն փիլիսոփայական-աստվածաբանական եզրերի հայերեն թարգմանությունը փոխառել ենք 1695 թվականին Հռոմում տպագրված լատիներեն-հայերեն բառարանից[6]:

Տ. ՇԱՀԵ ԱԲԵՂԱ ԱՆԱՆՅԱՆ

18-24:

4 Տե՛ս ընկերության պաշտոնական կայքէջը՝ http://urts173.uni-trier.de, նաեւ http://www.cusanus-portal.de:

5 *Nicolai de Cusa Opera Omnia*, vol. IV, Hamburg, Felix Meiner Verlag, 1959; *Nicolai de Cusa Opera*, Basiliae, 1565; "A Miscellany of Nicholas of Cusa", tr. by J. Hopkins, The Arthur J. Banning Press, Minneapolis, 1994; "Nikolaus von Kues: Philosophisch-theologische Schriften, lateinisch-deutsch",Band 1, Wien 1964, ¿ç 300-301; **Николай Кузанский**, *Сочинения в двух томах*, том 1, Академия наук СССР, изд. "Мысль", Москва, 1979, 283-288:

6 Dictionarium Latino-Armenum, Super Sacram Scripturam et libros Divini Officii Ecclesia Armenae (Բառգիրք Լատինացւոց եւ Հայոց ի վերայ Աստուածաշունչ գրոց եւ ժամակարգութեան գրոց Հայոց եկեղեցւոյն), Romae, MDCXCV (1695):

ԹԱՔՆՎԱԾ ԱՍՏԾՈ ՄԱՍԻՆ

Բանավեճ-երկխոսություն
Հեթանոս-անհավատի եւ քրիստոնյայի միջեւ

ԱՆՀավատ. Տեսնում եմ, որ ջերմեռանդությամբ եւ սրտաբուխ արցունքներով ու անկեղծ հեծեծանքներով ես ծնկել: Ո՞վ ես դու, ասա՛, խնդրում եմ:

ՔՐԻՍՏՈՆՅԱ. Քրիստոնյա եմ:

ԱՆՀավատ. Եւ ո՞ւմ ես պաշտում:

ՔՐԻՍՏՈՆՅԱ. Աստծուն:

ԱՆՀավատ. Ո՞վ է Աստված, որին պաշտում ես:

ՔՐԻՍՏՈՆՅԱ. Չգիտեմ:

ԱՆՀավատ. Ինչպե՞ս կարելի է այդքան լրջորեն պաշտել մեկին, ում չես ճանաչում:

ՔՐԻՍՏՈՆՅԱ. Պաշտում եմ նրան, ում չեմ ճանաչում:

ԱՆՀավատ. Զարմանքով տեսնում եմ մի մարդու, որ այդքան նվիրված է մեկին, ում չի էլ ճանաչում:

ՔՐԻՍՏՈՆՅԱ. Բայց ավելի զարմանալի է, երբ մարդ նվիրված է նրան, ում արդեն ճանաչում է:

ԱՆՀավատ. Ինչո՞ւ:

ՔՐԻՍՏՈՆՅԱ. Քանզի մարդ ավելի քիչ բան գիտի այն մասին, ինչն արդեն ճանաչում է, քան այն մասին, ինչը նրա համար գիտակցաբար անճանաչելի է (scit ignorare)[7]:

ԱՆՀավատ. Պարզաբանի՛ր, խնդրում եմ:

ՔՐԻՍՏՈՆՅԱ. Ցուրաքանչյուր ոք, ով մտածում է, թե որեւէ բան գիտի (այնինչ ոչինչ էլ չի կարելի իմանալ), ինձ անմիտի մեկն է թվում:

ԱՆՀավատ. Տեսնում եմ, որ խելքդ լրիվ թռցրել ես, որովհետեւ ասում ես, թե ոչինչ կարելի չէ իմանալ:

ՔՐԻՍՏՈՆՅԱ. «Գիտելիք» կամ «իմացություն» ասելով հասկանում եմ ճշմար-

7 Այս երկխոսության մեջ Քուզացին նկատի չունի, թե մարդկային իմացությունը ոչինչ չի կարող իմանալ: Նրա հիմնական փաստարկն այն է, որ արարածները, փվյալ դեպքում մարդկային սահմանափակ գիտությունը, չի կարող բացարձակ հստակությամբ ճանաչել իրերը, հետեւաբար՝ բացարձակ ճշմարտությունը: Միայն Աստված ունի սահմանափակ իրերի բնության մասին բացարձակ ճշգրիտ գիտելիք՝ ճանաչելով նաեւ իր իսկ անսահման բնությունը: Եւ չնայած մարդիկ գիտեն Աստծո գոյության մասին, այնուամենայնիվ, նրանք ո՛չ այս, ո՛չ նույնիսկ հանդերձյալ կյանքում չեն կարող ճանաչել ու փարբերակել Աստվածային բնությունը: Սույն երկում Քուզացին կրկնում է «De Docta Ignorantia» աշխատության մեջ արտահայտված միտքը. «գիտական անգիտությունն իբրեւ հիմք ունի այն փաստը, որ բացարձակ ճշգրիտ ճշմարտությունն անհասանելի է» (De Docta Ignorantia, I 2, 8-)

տության ընկալումը: Ինքն իրեն ինչ-որ բան իմացող համարելով՝ մարդ հավակնում է նաեւ ճշմարտության ընկալմանը:

Ընդավաք. *Ես էլ եմ այդպես կարծում:*

Ռրինոպոնյա. *Սակայն ինչպե՞ս կարող է ընկալելի դառնալ ճշմարտությունը, եթե ոչ ինքն իրենով, ինքնաբերաբար (per se ipsam): Այն ընկալելի չէ նաեւ այն դեպքում, եթե ընկալողը նախորդում է ընկալվող առարկային:*

Ընդավաք. *Ես չեմ հասկանում, թե ինչպե՛ս կարող է ճշմարտությունն ընկալելի դառնալ ինքն իրենով (per se ipsam):*

Ռրինոպոնյա. *Կարծում ես, թե կարելի՞ է այն ընկալել այլ կերպ եւ այլ հասկացության մեջ (sit et in alio):*

Ընդավաք. *Այո՛:*

Ռրինոպոնյա. *Ակնհայտորեն սխալվում ես: Ճշմարտությունից դուրս չկա ճշմարտություն, շրջագծից դուրս չկա շրջան, մարդկությունից դուրս չկա մարդ արարածը: Այդպես նաեւ ճշմարտությունից դուրս կամ որեւէ այլ հասկացության մեջ առկա չէ ճշմարտությունը:*

Ընդավաք. *Այդ դեպքում ինչպե՞ս կարող եմ իմանալ, թե ի՛նչ է մարդը, քարը եւ մնացած այն ամենը, ինչը գիտեմ:*

Ռրինոպոնյա. *Դու դրանցից ոչ մեկի մասին էլ որեւէ բան չգիտես*[8]*, այլ միայն կարծում ես, թե գիտես (sed te putas scire): Արդ, եթե ես քեզ հարցնեմ իբր քեզ հայտնի իրերի էության մասին, դու կհաստատես, որ չես կարող արտահայտել մարդու կամ քարի իրական էությունն ու բնույթը: Այն փաստը, որով դու գիտես, թե մարդը քար չէ, բխում է ոչ թե այն գիտելիքից, որով դու ճանաչում ես քարին եւ մարդուն եւ տարբերակում ես դրանք, այլ ավելի շուտ դեպքից (ex accidenti), գործառույթների ու տեսանելի ձեւերի տարբերությունից, որին, երբ դու սկսում ես տարբերակել, տարբեր անուններ ես տալիս: Քանզի մեր մտավոր տարբերակման ժամանակ շարժումն է տալիս անուններ:*

Ընդավաք. *Ճշմարտությունը մե՞կն է, թե՞ մի քանիսը:*

Ռրինոպոնյա. *Բացարձակ միակ է: Քանզի գոյությունն ունի միայն մեկ միակություն (una unitas), իսկ ճշմարտությունն էլ համընկնում է (coincidit) միակության հետ, եթե ճիշտ է, որ մեկ է միակությունը (sit unam esse unitatem): Հետեւաբար, ինչպես որ թվի մեջ չկա այլ բան, քան բացարձակ միակություն*[9]*, այդպես էլ բազմության մեջ մեկ է ճշմարտությունը: Այսու, ով չի հասկանում մեկը, երբեք էլ չի հասկանա թիվը, եւ ով որ չի ընկալում ճշմարտության միակությունը, ոչինչ էլ չի կարող ճշմարտապես հասկանալ: Եւ չնայած որ կարծում*

8 Տե՛ս նաեւ De Docta Ignorantia երկում արտահայտված միտքը. «Հետեւաբար, իրերի բուն էությունը, որը նաեւ ճշմարտությունն է, իր իսկության մեջ անհասանելի է» (I 3, 10:18-19):

9 Միակի ու միակության վերաբերյալ ավելի հստակ ու լուսաբանված մտքեր են առկա նաեւ De Docta Ignorantia երկում (I 5, 14:1-4; II 3, 105:14-16):

է, թե գիտի ճշմարտապես, կարող է նաեւ իրապես ավելի լավ ճանաչել իրերը, որոնք իր կարծիքով գիտի եւ ճանաչում է: Օրինակ, այն, ինչ տեսնում ես, կարելի է ավելի ճշմարտացիորեն տեսնել. չէ՞ որ ավելի սուր տեսողությունն ավելի ճշմարտացիորեն է տեսնում[10]*: Հետեւաբար, ստացվում է, որ դու տեսնում ես առարկան ոչ այնպես, ինչպիսին այն է իրականում: Նույնն է պարագան նաեւ լսողական եւ այլ զգայարանների համար: Բայց այն ամենը, ինչ մարդիկ գիտեն (ոչ այն գիտելիքի չնորհիվ, որով կարելի է իմանալ ամեն բան), գիտեն ոչ թե ճշմարտությամբ, այլ ճշմարտությունից տարբեր մի ձեւով եւ ոչ ինքնաբերաբար: Արդ, անտրամաբանական վիճակում է նա, ով կարծում է, թե ինչ-որ բան գիտի ճշմարտությամբ, բայց իրականում առանց ճշմարիտ գիտության է: Մի՞թե խելագար չեն համարի այն կույրին, որ, առանց գույները ճանաչելու, կկարծի, թե տարբերակում է դրանք:*

Անհավատ. *Այդ դեպքում, եթե ոչինչ կարելի չէ իմանալ, ո՞վ է իմաստունն ու գիտունը մարդկանց մեջ:*

Բրինոնյա. *Նա է իմաստուն, ով գիտի, որ ոչինչ էլ չգիտի: Եւ նա է պատվում ճշմարտությունը, ով գիտակցում է, որ առանց ճշմարտության չի կարող որեւէ բան ընկալել, գոյել, կենդանի մնալ կամ էլ հասկանալ որեւէ բան:*

Անհավատ. *Շատ հավանական է, որ ճշմարտության մեջ լինելու ցանկությունն է քեզ մղում երկրպագության*[11]*:*

Բրինոնյա. *Ճիշտ այդպես: Քանզի ես պաշտում եմ Աստծուն, բայց ոչ այն Աստծուն, որին քո հեթանոսական պատկերացմամբ գիտություն ես վերագրում եւ աստված անվանում, այլ այն Աստծուն, ով անխախտելի ճշմարտություն է:*

Անհավատ. *Եղբա՛յր, քեզ հիմա հարց եմ տալիս. դու պաշտում ես Աստծուն, ով ճշմարտություն է, մենք էլ նպատակ չունենք պաշտելու ճշմարիտ Աստծուն, ո՞րն է, ուրեմն, մեր (հեթանոսների) եւ ձեր (քրիստոնյաներիդ) տարբերությունը:*

Բրինոնյա. *Տարբերությունները շատ են: Բայց դրանցից ամենամեծն ու ամենաէականն այն է, որ մենք պաշտում ենք ինքնին բացարձակ, անսահմանելի, հավիտենական ու անխախտ ճշմարտությունը, մինչդեռ դուք պաշտում եք ճշմարտությունը ոչ որպես ինքնին բացարձակի, այլ իբրեւ այնպիսի, ինչպիսին է նա իր գործերի մեջ: Դուք պաշտում եք ոչ թե բացարձակ միակին, այլ թվի ու բազմության մեջ միակին: Հետեւաբար, դուք սխալվում եք, այնինչ ճշմարտությունը, որ Աստված է, անհաղորդակցելի է:*

Անհավատ. *Եղբա՛յր, խնդրում եմ, Աստծո մասին քո պատկերացումն ավելի՛ հստակեցրու: Ասա՛ ինձ. ի՞նչ գիտես այն Աստծո մասին, որին պաշտում ես:*

---

10 Քուզացու մեդաֆորիկ մտածելակերպի մասին ավելի մանրամասն տե՛ս **K. Harries**, *"The Infinite Sphere: Comments on the History of a Metaphor"*, Journal of the History of Philosophy 13 (January 1975), էջ 5-15:

11 Մմմտ. Հովհ. 3:21:

Ռ ը ն ե ա ն ա ն յ ա · Գիտեմ, որ այն, ինչ գիտեմ, Աստված չէ, եւ այն, ինչ ընկալում եմ, նման չէ Աստծուն, այլ Աստված անդրանցնում է դրանք:

Ա ն ձ ա վ ա ր · Հետեւաբար, Աստված ոչինչ է:

Ռ ը ն ե ա ն ա ն յ ա ·«Ոչինչ» չէ, որովհետեւ «ոչինչ»-ն ինքնին անուն ունի՝ «ոչինչ»:

Ա ն ձ ա վ ա ր · Արդ, եթե «ոչինչ» չէ, ուրեմն ինչ-որ բան է:

Ռ ը ն ե ա ն ա ն յ ա · Ոչ էլ ոմն մեկն է, որովհետեւ ոմն մեկն ամեն բան չէ: Եւ Աստծո պարագային չենք կարող ասել, թե Աստված ավելի շուտ ոմն մեկն է, քան ոչինչ:

Ա ն ձ ա վ ա ր · Շատ տարօրինակ հայտարարություններ ես անում, թե Աստված, որին պաշտում ես, ո՛չ ոչինչ է, ո՛չ էլ ինչ-որ բան: Այս տեսակետը որեւէ տրամաբանության չի ենթարկվում:

Ռ ը ն ե ա ն ա ն յ ա · Աստված ավելին է, քան ոչինչն ու ինչը, որովհետեւ ոչինչը, նրան ենթարկվելով, դառնում է ինչ: Այդպիսին է նրա ամենազորությունը: Դրանով նա գերազանցում է բոլոր գոյերին ու չգոներին, եւ նրան են ենթարկվում ե՛ւ գոյություն չունեցողները, ե՛ւ գոյություն ունեցողները: Նրա կամքով է չգոն դառնում գոյ, իսկ գոյն էլ՝ չգո, որը Նրան ենթակա իրերի մեջ է, որոնց նախորդում է նրա ամենազորությունը: Հենց այս պատճառով չենք կարող ասել, թե Աստված այս է կամ այն, որովհետեւ ամեն բան Նրանից է:

Ա ն ձ ա վ ա ր · Նա կարո՞ղ է անուն ստանալ:

Ռ ը ն ե ա ն ա ն յ ա · Անուն ստացողը փոքր է, իսկ Նա, ում մեծությունն անըմբռնելի է, մնում է անարտահայտելի:

Ա ն ձ ա վ ա ր · Ուրեմն, Նա անարտահայտելի՞ է:

Ռ ը ն ե ա ն ա ն յ ա · Նա անարտահայտելի չէ, այլ միայն ամեն արտահայտելիից վեր է՝ իբրեւ ցանկացած անվանակրի պատճառ: Եւ ուրեմն, չի կարող պատահել, որ Նա, ով մնացած բոլորին անուն է տալիս, առանց անունի է:

Ա ն ձ ա վ ա ր · Հետեւաբար, Նա ե՛ւ անարտահայտելի է, ե՛ւ արտահայտելի:

Ռ ը ն ե ա ն ա ն յ ա · Ո՛չ, ո՛չ եւ ո՛չ: Աստված ոչ թե հակասությունների հիմքն է, այլ Պարզություն է, որն ամեն հաստատության հիմքում է ընկած: Արդ, չենք կարող ասել, որ Նա ե՛ւ արտահայտելի է, ե՛ւ անարտահայտելի:

Ա ն ձ ա վ ա ր · Ի՞նչ կասես, ուրեմն, Նրա մասին:

Ռ ը ն ե ա ն ա ն յ ա · Այս պարագային նա ոչ կարող է անվանվել եւ ոչ էլ չանվանվել. նա միաժամանակ ե՛ւ անուն ունի, ե՛ւ չունի: Ոչ մի փոխլրացնող եւ փոխբացառող կամ էլ հակադրվող հասկացություն չի կարող ընդգրկել նրա անսահման մեծությունը: Հետեւաբար, նա միակ Սկիզբն է, որը նախորդում է իր մասին եղած ցանկացած պատկերացման:

Ա ն ձ ա վ ա ր · Հետեւաբար, գոյն էլ Աստծուն չի կարող համապատասխանել:

Ռ ը ն ե ա ն ա ն յ ա · Քո դատողությունը շատ ճիշտ է:

Ընհավատ. Հետեւաբար, Նա չգո է:

Ռրինոպոնյա. Աստծո պարագային «Նա ոչինչ է» եւ կամ «Նա ոչինչ չէ» ասելը ճիշտ չէ: Ավելին, Նա բոլոր գոյություն ունեցող եւ գոյություն չունեցող արարածների Սկզբնաղբյուրն է:

Ընհավատ. Աստված բոլոր գո եւ չգո արարածների Սկզբնաղբյո՞ւրն է:

Ռրինոպոնյա. Ո՛չ:

Ընհավատ. Բայց դու հենց նոր ասացիր այդ մասին:

Ռրինոպոնյա. Այդ ասելով ճշմարտությունը խոսեցի, եւ հիմա էլ ճշմարիտ եմ ասում, երբ ժխտում եմ: Քանզի եթե կան գոյության ու չգոյության ինչ-ինչ սկիզբեր, ապա Աստված նախորդում է դրանց: Այնուամենայնիվ, չգոյությունն իր չգոյության համար սկիզբ չունի, այլ միայն՝ իր գոյության համար: Քանի որ չգոյությունը գոյելու համար կարիք ունի սկզբի: Այս իմաստով, ուրեմն, նա չգոյության Սկիզբն է, որովհետեւ առանց նրա չգոյությունը գոյություն չէր ունենա:

Ընհավատ. Աստված ճշմարտությո՞ւնն է:

Ռրինոպոնյա. Ո՛չ, նա ճշմարտությունից էլ առաջ է:

Ընհավատ. Իսկ արդյոք Նա տարբե՞ր է ճշմարտությունից:

Ռրինոպոնյա. Ո՛չ, որովհետեւ տարբերությունը Նրան հասու չէ: Նա անհասանելի ու անսահման կերպով գերազանցում է այն ամենը, ինչը մենք ընկալում եւ անվանում ենք ճշմարտություն:

Ընհավատ. Իսկ դուք՝ քրիստոնյաներդ, Աստծուն «Աստված» չե՞ք անվանում:

Ռրինոպոնյա. Անվանում ենք:

Ընհավատ. Այդպիսով դուք մի՞թե չեք փորձում տարբերակել ճիշտն ու սխալը:

Ռրինոպոնյա. Ո՛չ առաջինը, ո՛չ երկրորդը եւ ո՛չ էլ երկուսը միաժամանակ: Մենք չենք փորձում «Աստված» անունը նրան տալով հաստատել ճշմարտությունը, ոչ էլ սխալ ենք համարում այն, որ Նրա անունն «Աստված» է: Եւ ոչ էլ նշում ենք, թե այդ հաստատումը ճիշտ է ու սխալ միաժամանակ: Քանզի Նրա պարզությունն անդրանցնում է ե՛ւ անուն ունեցող, ե՛ւ անանուն իրերին:

Ընհավատ. Ուրեմն ինչո՞ւ եք դուք՝ քրիստոնյաներդ, օգտագործում «Աստված» անունը Նրա համար, ում չեք ճանաչում:

Ռրինոպոնյա. Այդ անվան միջոցով Նրա կատարելությանը նմանվելու նպատակով:

Ընհավատ. Բացատրի՛ր, խնդրում եմ:

Ռրինոպոնյա. «Աստված» անունը ծագում է θεωρέω բառից, որ նշանակում

է «տեսնել»[12]: Մեր տեսողության շրջագծի մեջ Աստված գույների տեսագծին է նման: Ըստ էության, գույնն այլ կերպ անհնար է ըմբռնել, քան տեսողությամբ, իսկ բոլոր գույների ընկալելիության նպատակով, տեսողության կենտրոնն անգույն է: Հետեւաբար, գույնի շրջագծում տեսողությունը բացակա է, քանզի տեսողությունն անգույն է: Ըստ այսմ, գույնի շրջագծի հետ համեմատած՝ տեսողությունն ավելի շուտ ոչինչ է, քան ինչ: Զէ՞ որ գույնի շրջագիծը դրանից դուրս ոչ մի գոյության (esse) չի պատկանում՝ հաստատելով, որ գոյը գոյություն ունի միայն իր շրջագծի սահմաններում, որտեղ այլեւս անհասանելի է տեսողությունը: Հետեւաբար, տեսողությունը (visus), իբրեւ անգույն, գույնի շրջագծից ներս անանուն է, որովհետեւ այլեւս ոչ մի գույն նրան չի համապատասխանում: Այնուամենայնիվ, տեսողությունը, իր տարբերակման շնորհիվ (per discretionem), գույներին անուններ է տալիս: Գույնի ոլորտում տեսողությունի՛ց է կախված յուրաքանչյուր անվանակոչություն, իսկ տեսողության անունը, որից ծագում են բոլոր անունները, դառնում է ավելի շուտ ոչինչ, քան ինչ: Ահա եւ Աստված էլ բոլոր իրերին վերաբերվում է այնպես, ինչպես տեսողությունը՝ տեսանելի իրերին:

Ընհավոտ. Ինձ դուր են գալիս քո խոսքերը: Եւ ես շատ լավ հասկացա, որ՝

ա. արարածների ոլորտում անկարելի է գտնել Աստծուն ու Նրա անունը.

բ. Աստված անհասանելի է ցանկացած դատողության համար՝ չենթարկվելով «ինչ»-ի հաստատմանն ու սահմանմանը: Քանզի, չունենալով արարածի հատկություններ, նա չի պարունակվում արարածների ոլորտում: Ավելին, բաղկացյալների ոլորտում անհնար է գտնել անբաղկացյալին: Արդ, անվանակոչված բոլոր անունները բաղկացյալներ են: Իսկ վերջինս էլ ոչ թե ծագում է ինքն իրենից (ex se) , այլ նրանից, որ նախորդում է բոլոր բաղկացյալներին: Եւ չնայած որ թե՛ բաղկացյալները եւ թե՛ բաղկացյալների ոլորտն իրենց գոյությամբ պարտական են անբաղկացյալին, այնուամենայնիվ, անբաղկացյալը, իբրեւ ոչ բաղկացյալ, անճանաչելի է մնում բաղկացյալների ոլորտում:

Արդ, թող Աստված, որ ծածկված է աշխարհիս բոլոր իմաստունների աչքերից, օրհնյալ լինի հավիտյանս:

12 Տե՛ս նաեւ De Quarendo Deum I 19. «θεως բառը ծագում է θεωρέω բայից, որ նշանակում է *դիտել* կամ *ըմբռնել*»: